



Կանոնագրության

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ



ԳՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



թիվ 7




ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ




ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆԳԵՍ هانراكيداق HANRAKIDAG

ՀԱՐԱԹԱԿԱՆ مجموعه علوم JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Է. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 7 || 21 ՓԵՏՐՈՒԱՐ 1904



ՍԻՐԵՐԴ



ԵՐԱԶՆԵՐԸ



Լուռ երազներ կը կարմրին հոգւոյն մէջ,
Լուսնի լուսով լուսցած օրուան պէս աղւոր,
Որք կը պահեն ցուրտ խաբկանքներ իրենց մէջ,
Սիրսն ալ գերին կ'ըլլայ անոնց ամեն օր:


Անոնք ժպտի մ'մէջ կը ծածկեն մեր հոգին,
Եւ մենք յուզուած, միշտ գեղեցիկն ուխտաւոր,
Անձկութիւնով լուռ կը փարինք, հեռագին
Այգու մարդկայ ցոլերուն փառաւոր:

Երազներու փայփայանքն սիրավատ,
Բան մը կ'զգանք կուրծքերնուս մէջ հեւալէն,
Սարսուռներով երբ սուրերներն կը փայլեն:

Բայց կը փոխուին այդ լոյսերը անդադար,
Եւ մենք կուլանք վերջիւսմով ցաւագին,
Երբ արցունքը կ'արիւնոտէ մեր հոգին:

Ա. Գարա-Հիւսր

ԽԱԶԻԿ ԳԱՎԱԼՃԵԱՆ



ԽԱՐՔԵՐԴԻ ՏԵՂԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մ Է Լ Է Տ

Մէլէս բառը որոշ է թէ հայ բառ մը չէ ու նոյնչափ ալ որոշ է թէ արարերեն միւլաս բառէն յառաջ եկած է, սակայն նպատակ չունիմ բառին ուսումնասիրութիւնն ընելու:

Մէլէտ, բառ մըն է որ եղեր է նշանակելի օրի մը անունը, իր հետ բերելով — հաւանականաբար — կրակապաշտութեան ժամանակներէն սովորութիւն մը:

Տեառներնդառաջի նախորդ իրիկունն է որ Մէլէս կ'ըսեն, որ երկու յիշատակութիւններ կը պարունակէ. և. Քրիստոսի ընծայուածին ատեն գիշերի մնալով վառած մաշալաներով (*) բերուելուն յիշատակութիւնը, իսկ միւսը կրակապաշտութեան ատենէն մնացած սովորութեան մը յիշատակութիւնը:

Օդը իր սաստիկ ցրտութիւնը կորսնցուցեր է, ձիւնհալը սկսեր է թէեւ յաճախ անարեւ բայց տաք մթնոլորտին պատճառով, լեռներու ծմայ. կողքերուն վրայ կը տեսնուի սրտուռ ձիւնի ձերմակ կտոր մը, և դաշտերու մէջ սեւ գծով մը երկնցող առուններուն փոսին մէջ մնացող ձիւնը ձերմակ փրփուրներով անցնող առուի մը տեսքը ունի. հալած ձիւնին տակէն կակուղ հողը կ'երեւի արդէն որուն վրայ քիչ ատենէն կանաչ մը պիտի փռուի կակուղ զբօսավայրն ըլլալու համար դարունի մատղշուկ գառնիկներուն:

Մէլէտի օրէն չաբաթով առաջ, տաք օրերու կէսօրերուն, պզտիկ տղաքներու վազվառուքը կը տեսնուի կակուղ դաշտին մէջ, ամենէն հին լաթերը հագած, հին կօշիկ մը ոտքերը անցուցած որուն տակ ամէն քայլափոխի կակուղ ցեխի մը խաւը կը փակի ծանրացնելով հինցած կօշիկները, չատեր ալ բոլորովին բոբիկ սակայն ո՛չ ազատ նորէն ցեխի բեռէ մը որ կը կախուի երկու ոտքերէն, մէկ ձեռքերնին կտոր բրդուռ չուաններ իրարու հանգուրցուած, միւս ձեռքերնին սրածայր փայտ մը որ իրենց իբր գործիք կը ծառայէ փուշեր արմատախիլ ընելու ատեն, ասդին անդին կը վազվառուեն, ամենէն պզտիկ փուշին անգամ կ'այցելեն հողին՝ այս առաջին ու մանտրտիկ բարեկամները, ու կը հանեն փուշերը, Բաւական երկար աշխատանքէ մը ետքը ամէն

(*)Փայտ մը որուն ծայրը քուրջեր կը փաթտեն եւ հալած մոմի մէջ կը Թաթխեն ու կը վառեն:

մէկը, փուշի դէզ մը ունի հիմա՝ որ կը կապէ իր կտորուանքներէ բաղկացած չուանովը ամէն խնամք գործ դնելով՝ որպէսզի ճամբան չթափին փուշերը. դաշտէն դուրս ելած, ճամբու մը վրայ կանգուն, առաջին գործը կ'ըլլայ իր ծանրացած ոտքերը թեթեւցնել, քարի կամ փայտի կտորով մը կը քերէ կօշիկին կամ ոտքին տակը ու ահա իւրաքանչիւրը իր շալկածը կռնակն առած տուն կը դիմէ, յաճախ կը պարզուի նոյն տեսարանը դիտող աչքին:

Մէլէտի իրիկունը, երբ իրիկուան արեւու պաղ սկաւառակը արեւմուտքի հորիզոնին ամպերուն ետեւէն կ'երթայ թաղուիլ, եկեղեցիէն կը քակուի ժողովուրդը որուն մեծ մասին ձեռքը վառուած սոս մը կայ... Բրիստոսի ընծայումին ժամանակ եղած լուսավառութեան յիշատակն է անշուշտ:

Արեւը բաւական ատեն է արդէն որ իր վերջին պաղ ճառագայթները իրեն քաշած հեռացեր է մեր աչքերէն ուրիշ հորիզոններու գիշերի քօղը փարատելու համար. բաց օդին, երկինքի կապոյտին վրայ կ'սկսին լուսաւորներու ամենափայլունները նուազուն բեկրեկումներով բացխրիլ, իսկ ջուրը մոխրագոյն հողագնդին, տանիքներուն վրայ նիհար ու դեղնորակ մեղրամոմէ բարակիկ մոմեր մեծ ու պզտիկ ձեռքերու մէջ տծգոյն դեղին բոց մը կ'արձակեն. տանիքին վրայ դիզուած փուշերուն կամ որթոտներուն բոլորտիքը կը վազվզեն մանկիկներ ձեռքերը վառած մոմերով և սուր ու ուրախ ճիչերով մթնոլորտը կը լեցնեն:

Իրիկունը կը յառաջանայ, մեղմ մութ քօղի մը սփռուիլը կ'զգայ ամէն մարդ՝ որ երթալով կը թանձրանայ, մանուկներու վառող մոմերուն լոյսը աւելի կ'սկսի որոշուիլ, յանկարծ տանիքներու մէկէն, գոռ աղմուկի մը մէջէն, բոցի լեզու մը կը բարձրանայ որ մերթ ուղղակի վեր, մերթ կողմնակի կ'սկսի լլուրուտը իլ սպառնալով կարծես իր բոլորտիքը շարունոյ մանկիկներուն որ ոչինչ սեպելով բոցին սպառնալիքը, զպուններուն փէշերը ժողված բոցին վրայէն ասդին անդին կը ցատկեն. բոցէ լեզուն կը պղտիկնայ, ձայներն ալ կը քիչնան, քիչ մը վերջը վառած փուշի կտոր մը վերջին պոռչտութեամբ մէջէն օդին մէջ կը նետուի. հազիւ թէ մէկը մարած ահա ուրիշ քանի մը կողմերէ նոյնօրինակ պոռչտութեամբ կը յաջորդեն. նոյն բաներն են որ տեղի կ'ունենան. բայց հոս ահա քառսունքի մէջ եղող մանկիկ մը կը պտտցնեն կրակին բոլորտիքը որմէ ետք ալ քառսունքէ ելած կը համարուի և կրնայ դուրս ելլել տղացիան մայրը (որովհետեւ հին սովորութիւն մը կայ, թէեւ հիմա թեթեւցած, որ մինչեւ քառսունք օր տղացիան մօր մը վրայ արեւի լոյս պէտք չէ ընկնի), անդին քառսունքի մէջ եղող նոր հարսն ու փեսան քառսունքէն

հայնելու համար հազարումէկ պոռչառութեան մէջ կրակին բոլոր-
տիքը կ'որոցնեն... Ձայները հետզհետէ կը դադրին. հիմա
կնիկներ ձեռքերին մէյմէկ կրակառ բռնած կ'սկսին Մէլէտին մո-
խիւրը առնել ու հաւնոցները տանիլ, սա համոզումով թէ Մէլէ-
տին մոխիւրը եթէ հաւնոցին մէջ լեցնեն՝ հաւերը ձմեռի զուրտէն
ետք չուտած կ'ելլեն:

Ժամ մը ետք բոլոր աղմուկները կը դադրին, տանիքներու
վրայ ո՛չ մանուկներու վազքը ոչ ալ մոմերու լոյսը կ'երեւի. գի-
շերի սեւ քօղը կը փռուի, գերեզմանի լռութիւնը կը տիրէ,
ծրխթիլներու հատկտիւ ձայներն ալ չկան, մինակ անլուսին
կապոյտ երկնակամարին վրայ պճլուն կէտեր կը բեկբեկին:

W. R. R. R.

ԻՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ ԳԱՒԱՌԻ ԿԵԱՆՔԷՆ

ԱՐՏԵՆ ԶՈՂԵՐԸ

Անան աղուաշ առտու մը, կ'արթննամ ընդոստ՝ դիմացի դը-
րացիներէն լսող անսովոր աղմուկէն: Տունի մը դուռը կը զար-
նուի, տենդային ուժգնութեամբ: Ու կանխահաս զարթօնքին հետ
տիրադուշակ փսփսութեան կը պտուտքին ամէն կողմ, մինչ դող-
դոջուն, հերարձակ աղջնակը կը շարունակէ բախել անընդհատ,
բնա՛հ հոգ չընելով թէ բնագդական սարսուռներ կը ցանուին հան-
գըստաւէտ յարկերու տակ, թերեւս կիսատ ձգելով փափկասուն
քնասէրներուն տնուշիկ անուրջները:

Պատուհանին առջեւ եմ հիմա, թեթեւ մրափէս շատոնց սթա-
փած:

Կը դիտեմ: Դրան դղրդումը կը դադրի վերջապէս, որուն
բացումովքէն, անհանգիստ, ապշահար դէմքեր կ'ուրուագծուին,
պակուցիչ լռութեամբ. բառերը սառած են կարծես, անակընկա-
լին ազդումէն. ու պիշ նայուածքներ՝ պրկուած դիմագծերու խո-
րը, ցաւագին հարցում մը կ'արձանացնեն հիասպառ գուժկանին
հանդէպ, որ կը թոթովէ. — Խորէ՛նը...

Հազիւ ժամ մը վերջ, երբ կեանքի եռուզեռն ա՛լ սկսած է զգացուիլ, եւ այլազան ամբոխին հոսանքէն՝ հակադրական տեսարաններու տողանցում մը սարքուած է փողոցներուն մէջ, — ես կը նշմարեմ՝ յանկարծ՝ դադարակիր թափորի մը ծանրաքայլ առաջացումը, որուն առջեւէն մէկ կողմ կը քաշուին շատեր, եւ անցորդ անծանօթ կիներ կանգ կ'առնեն, հարցումներ ուղղելու պատուհանները սեղմուած հետաքրքիրներուն: Տեղեկութիւնները չեն ուշանար, կ'ընդլայնուին, կը բացատրուին հետզհետէ և վերջ ի վերջոյ՝ կարեկցոտ եզրակացութիւններու կը յանգին: Չի ճանչցողներն իսկ՝ ափսոսանքի հառաչ մը կ'արձակեն, իմանալով թէ տակաւին շատ դեռատի պատանի մըն է եղեր մեռնողը, քսանին հազիւ հասած... Բայց ես, միշտ պատուհանին առջեւ ականատես և ունկնդիր, տարտամ շշուկներ միայն կը համարիմ այս բոլոր անձկագին ասուլիսները, որովհետեւ գրաւուած՝ եմ բողբոլփին տարբեր, կսկծալի խորհուրդներով: Պատահական ծանօթութիւն մը, վաղուց քրքրել տուած էր ինծի՝ կեանքի տառապալից շրջաններէ տարաբախտ պատանիին, որ տրամառիթ գուգադիպութեամբ մը, իրեն անուանակից ու տարեկից ուրիշ վաղամեռիկի վիճակակից ալ կ'ըլլար ահա:

Խորէններն այսպէ՛ս են, պիտի մըմնջէր մեր Միլվուան:



Խցիկիս անսփոփ միայնութեան մէջ, ուր հաւաքուած պատկերաշարներէն՝ բացակայ ժօրեղբօր մը և կարօտեալ եղբայրիկի մը լուսանկարները միայն սենեկակից կը թուին ինծի, աչքերս չեմ կրնար զատել դուրսի խիտ անցուդարձէն, որ սովորական միօրինակութիւնը կը պարզէ հիմա, սոսկ քանի մը վայրկեան զոհելով մահերգակութեօրին, ճիշդ ինչպէս որ զոհի մը անցք տալէ յետոյ, ծովուն ծփծփուն ծալքերը կը միանան նորէն՝ հանդարտ ու ցոլացիկ:

Խորհուրդներու յարաճուն խռովք մը ծնցուցած է, սակայն, հոգւոյս ներսերն, անդարձ մեկնումը Խորէնին ու յիշատակներու համանման լծորդութեամբ՝ տարիներու մշուշէն մերկացած՝ որոշակի կ'ստուերագծուի միւսին դալկահար դէմքն ալ: Յաւին այս երկուորեակ եղբայրակիցները, քով քովի կուգան՝ ծննդավայրի ահագին հեռավորութիւններէն, անունի, տարիքի ու ֆիզիքականի շատ զարմանալի նոյնութեամբ միանալով, որոնք հիւանդագին կեանքի երկար շրջաններուն՝ ծնողական անսգիւտ գուրգուրանքներու մէջ փաթտուած՝ խանդակաթ խնամքներու երեւակայութիւնք բոլոր քաղցրութիւնները վայելելէ յետոյ, ճիշդ միեւնոյն եր-

ջանիկ մահն ալ կը վիճակուէր իրենց, անկեղծ արցունքներու նուիրական օծութեամբ:



Տարիներ առաջ, դպրոցական պատանեակ մ'էր^ա այս վերջի խորէնը, խելօքիկ, յուսալից ուսանող մը, ապագայի միամտուկ երազներով բաբախուն: Իր չափաւոր նիհարութիւնը, ջղուտ կազմուածքին վերագրուած, ոչ ոք փորձած էր վերահաս աղէտքի մը իբրեւ խտանչան վեր առնել, մանաւանդ որ թէ Ֆիզիքական և թէ ուսումնական կեանքը՝ բնական ընթացքէն ո եւ է չեղում ցոյց տուած չէր, գէթ երեւութապէս: Ու ո՛րքան բարեկեցիկ՝ նոյնքան աւելի բարեսիրտ ծնողքի մը այդ կրտսերագոյն հոգեհատորը, կենսանորոգ խնամքներու մէջ կ'ուռնանար այսպէս:

Տարիքի ամենէն առոյգ շրջաններուն, սակայն, ու դասական յառաջդիմութեան ամենէն բեղմնաւոր շրջանին ամպ մը անցաւ այդ երջանիկ ընտանիքին բախտի հորիզոնէն, թեթեւ սարսուռ մը սպրդած էր սիրասուն տղեկին ներսերը, պարզ անհանգստութիւն մ'ինքնին, որ հակառակ այնքան փայփայքոտ դարմանումներու, չէ՛ր ջնջուեր հետզհետէ, ընդհակառակը՝ կը յամառէ՛ր, կ'արմատանար տակաւ, տժգոյն տխրութեամբ ստուերոտելով աւնոր յոգնած դէմքը, Մնունդի, հագուստի ու զուարթութեան անթերի առատութիւնները կրկնապատկուեցան այլեւս: Խորէն, առա՛նց նոյն իսկ կասկածելու իր կացութեան վրայ, ենթարկեալ ուեցաւ ա՛լ աւելի խանդակաթ վերաբերումներու. տունէն դըպրոց՝ իր կեանքը մանրամասն լրացումը կը կազմէր առողջապահութեան աւ կազդուրումի բոլոր կենսառատ պայմաններուն: Բայց մինչդեռ ինքը, դպրոցին մէջ, իսպառ անգիտա՛կ իր հատնումին, անխռով կը շարունակէր ջանքերը: Անդին իր ահաբեկ ծնողքին հետ՝ երէց եղբայրներն ալ նոյնքան մտահոգ՝ գիշեր ցերեկ իր վրայ կը մտածէին, փնտռելով ու ծրագրելով հանգստութեան ու խնամքի նորանոր կարելիութիւններ, ո՛յժ կա՛յծ մ'աւելի՛ հասցընելու համար, կենսական պլպլուն կանթեղէն, ու բոլոր այդ հեքոտ հաւաքումները, տունին անդամներուն միջեւ ժամեր տեւող այդ արհաւիրաց ասուիսները՝ պարբերական ճշդապահութեամբ կը սկսէին ու կը վերջանային: Խորէն, այդ խռովալիւր անցուդարձերէն չէր մ'իսկ չափտի իմանար, դպրոցէն վերադարձին, այլ՝ ճառագայթուն զուարթութիւն մը զինքը կը շրջապատէր, տունէն ներս մտնելու վայրկեան: Մէն մի տնեցի՝ ժպիտ մը, քահ քահ մը ու ծիծաղ մը պահած կ'ըլլար իրեն համար, ոգևոր

ու կեանքոտ կատակներով համեմուած :

Ահա՛ այսքան շենշող ապրուածքի մէջ, ամիսներով կրցաւ ան՝
դիմադրել վտանգին, միշտ անգիտակ ու երջանիկ :

(Մնացեալն յաջորդ թիւով)

Համարացում

ՔԱՐՉԱՏԵ

Հազարաւոր տարիներ առաջ աշխարհիս վրայ քարհատ մը
կար : Ամէն ատեն ձիւնին, տնձրեւին ինչպէս նաեւ կիզիչ արեւին
տակ ահագին ու վիթխարի ապառաժի մը կուրծքին ճանճի մը
պէս փակած քարի կտորուանքներ կը փրցնէր լռիկ միջիկ և ան-
տըրտունջ : Դիւրին արհեստ մը չէր քարհատինը ինչպէս մարդ-
կրնայ խորհիլ. ասոր հետ մէկտեղ վարձքն ալ շատ չնչին բան
էր. բայց ինք բնաւ դժգոհ չէր իր ճակատագրէն ու ամէն իրի-
կուն արին քրտինք մտնելով վաստկած չորաբեկ հացը կը կրծը-
տէր ու Աստուծոյ փառք կուտար : Օր մը խօլ փափաղն ունեցաւ
տեսնելու թէ իր հանած քարերն ի՞նչ բանի կը գործածուէին եւ
իրեն ցոյց տուին անծայրածիր ծառաստանի մը մէջ կառուց-
ուած հրաշակերտ ապարան մը : Հոյակերտ շէնքը արփիի ճառա-
գայթներու տակ իր ոսկեդրուագ գմբէթներով կը փալիւրար ու
անոր առջեւ կը տարածուէր լայնարձակ բուրաստան մը որուն
երփնաւէտ ծաղիկներու արբշտեցուցիչ ու զգլխիչ բուրումները
քիթեր կը պարարէին : Ընդարձակ պատշգամբի մը մէջ, մետաք-
սահիւս կարմորակ ամպհովանիի մը տակ թաւշեայ ու կերպասէ
հեշտաբոյր բազմոցի մը վրայ ընկողմանած էր տանտէրը հուրի-
նեւրով չըջապատուած : Մեր խեղճուկ քարհատը տուն դարձաւ
տեսածներուն վրայ չգմայլած ու տարօրէն զգացումներով օրօրուած :
Այդ իրիկուն ցամաք հացը որկորէն վար չէր երթար, « Փառք
քեզ Աստուած » ն ալ կարծես ակամայ կ'ելլէր բերնէն. քունը
չէր գար... կը խոկար : — Ա՛խ. ի՞նչ աղէկ բան է հարուստ ըլ-
լալ ու հարուստին պէս ամպհովանիի տակ փափուկ բազմոցի վրայ
պառկիլ, ըսաւ ինքնիրեն :

Երկնային ոգի մը յանկարծ իր դէմ կանգնելով ըսաւ. « Ու-
ղածիդ պէս թո՛ղ ըլլայ » : Ու քարհատը հարստացաւ : Հիմա
հանգիստ ու անհոգ պառկած էր փափուկ ու նրբահիւս բազմոցի
մը վրայ ամպհովանիի մը տակ : Չափազանց երջանիկ կ'զգար
ինքզինքն ու կը կարծէր թէ իրմէն աւելի երջանիկ մէկը ո՛չ ապ-
րած է ոչ ալ պիտի ապրի աշխարհիս վրայ :

Օր մը արեւն իր կրակ ճառագայթները երկրի վրայ թափեց, խանձեց չորացուց ամբողջ բուսականութիւնը ու նաեւ մրկեց մարդուկին ամպհովանին. սիրտը վշտագնեցաւ ու խռովեցաւ որովհետեւ արեւն իր մարմինը կ'այրէր հետեւաբար իրմէն զօրաւոր էր. սկսաւ ա՛խ քաշել ու մտմտալ. « Ի՞նչ աղէկ կ'ըլլար եթէ արեգակ ըլլայի » : Բարի ոգին եկաւ ու ըսաւ. « Ուղածիդ պէս թող ըլլայ » : Ու հարուստը արեգակ դարձաւ. չեչտակի տարածեց իր հրային նէտերը, այրեց բոյսերը, ցամքեցուց ջուրերը, մրկեց թափեց հարուստ մարդոց չողչողուն ամպհովանիներն ու անոնց մարմիններն ալ խանձեց :

Գոհ էր արեգակը, որովհետեւ ինքզինքը շատ զօրեղ կ'զգար : Օր մը ամպ մը եկաւ իր գէմ ու այլ եւս իր հրեղէն սլաքները չի կրցին զայն թափանցել և երկիրն անփնառ մնաց : Ասանկով արեւին սիրտը խոցուեցաւ ու տենջաց ամպ դառնալ : Բարի ոգին եկաւ ու ըսաւ. « Ուղածիդ պէս թո՛ղ ըլլայ » : Ու արեգակը ամպ դարձաւ. արեւին դէմ անցաւ ու երկրի վրայ բոխեցան աղբիւրներ, բոյսերը ծաղկեցան ու աշխարհ հազարաւոր բարիքներով լեցուեցաւ : Ետքը ամպն երկրի վրայ անձրեւ տեղաց, գետեր ու ծովեր կազմուեցան ու աշխարհն ողողեցին և ամէն բան սրբեցին տարին : Ամպը ապառաժին վրայ ալ հեղեղներ հոսեցուց, բայց ան դիմացաւ ու մնաց անսասան : Եւ ահա ամպին սիրտը նախանձով լեցուեցաւ ու ըղձաց ապառաժ դառնալ : Բարի ոգին եկաւ ու ըսաւ. « Ուղածիդ պէս թող ըլլայ » : Ու ամպը ապառաժ դարձաւ :

Նորաստեղծ ապառաժը անվախ և վեհ կանգնած էր, իրեն համար ոչինչ էին արեւի կրակոտ ճառագայթները, ամպերու թափած հեղեղները : Օր մը մարդ մը եկաւ, բրիչն ու նիզը՝ անոր կուրծքին մէջ խրեց ու թով : Անասան ապառաժը դղրդուեցաւ. բրիչի ձայնին արձագանգեցին սարեր ու ձորեր : Իսկ մարդը անդու ու անխնայ կը փորէր անոր մարմինը ու կտորներ կը հանէր : Ապառաժը կամեցաւ վերջապէս մարդ դառնալ : Բարի ոգին դարձեալ եկաւ ու ըսաւ. « Ուղածիդ պէս թող ըլլայ » : Ու ապառաժը քարհատ դարձաւ :

Եւ անկէ ետեւ ամէն ատեն ձիւնին, անձրեւին ինչպէս նաեւ կիզիչ արեւին տակ ահագին ու վիթխարի ապառաժի մը կուրծքին ճանճի մը պէս փակած քարի կտորուանքներ կը փրցնէր լռիկ մնջիկ և անտրտունջ : Ու ամէն իրիկուն իր արիւն քրտինք մտնելով վառտկած կտոր մը չորաբեկ հացը կը կրծէր ու Աստուծոյ փառք կուտար :

Թրգմ.

ՄԵԼԻՔՈՆ Ս. ՂԵՒՈՆԻԵԱՆ

Abyssale

վար է. երբեմն պաղ կամ տաք ջրի յորձանքներ $+7^{\circ}$ և $-10,5^{\circ}$ Ի միջեւ բարեխառնութիւններ կուտան, սակայն ընդհանուր միջինը Ատլանտեան ովկիանոսի համար, 1 աստիճանի մօտ բան մըն է: Ջուրին ըրած ճնշումը ահագին է. իւրաքանչիւր հազար մէթրի համար մէկ քառակուսի տէսիմէթրի վրայ եղած ճնշումը 10,850 քիլոկրամ կ'աւելնայ. եւ զարմանալի է որ ասանկ սոսկալի ճնշումի տակ հոն ապրող կենդանիները ինչպէս չեն ճղմուիր. պէտք է սակայն դիտնալ որ անոնց մարմինը այդ ջուրը գրեթէ ծծած ըլլալով՝ երկուքն ալ համասեռ տարր մը կը ձեւացնեն. նոյն իսկ եթէ այդ կենդանիները՝ մեր մթնոլորտին մէջ բերուէին, մարմիննին պիտի բզկտուէր, արտաքին ճնշումի անբաւականութեան պատճառաւ: Վերջապէս, այդ խորութիւններու մէջ արեւու լոյսը անկարող ըլլալով թափանցել, հոն կանաչ բոյս բնաւ գոյութիւն չունի. այս կէտը շատ կարեւոր է, որովհետեւ ատկէ կը հասկըցուի թէ հոն ապրող կենդանիները բոյս չգտնելով ուտելիք, բացարձակապէս մսակեր կ'ըլլան. բոյսերուն՝ այս գործարանաւոր



ներթերուն կենդանիներու աշխարհին մէջ անցնելու դերը ջրն-ջուած է հոն, որով կեանքի գոյութեան հիմնական պայմանները ամբողջովին փոխուած են:

Շատ մը ծովային կենդանիներու տեսակներ յարմարած են այդ միջավայրին. ասոնք են ճաճանչաւորները, Սպնգազգիները, Բուստեայք, Ծովամայրեր, Սայրամորթեր ու Խեցեպատեաններ և չորս հազար տեսակէն աւելի ձուկեր: — Ծովուն մակերեւոյթէն քանի մը հարիւր մէթր վար կատարեալ մթութիւն տիրելով հոն ապրող կենդանիները տեղափոխուելու կամ իրենց սնունդը փնտռելու համար խորխորամաք գործելէ զատ ուրիշ միջոց չունին. ասոր համար իրենց մարմինն ամէն կողմերէն փոկաձեւ լարեր կը մեկնին որոնք իբր շօշափող գործարան կը ծառայեն իրենց: Ովկիանոսներու անդունդները լեցնող այս կենդանիները շատ խոշոր աչքեր ա'լ ունին, գիշերային թռչուններուն պէս. կերելի թէ փոսփորափայլ կենդանիներու արձակած լոյսէն է որ կ'օգտուին ասոնք. նոյն իսկ կան ձուկեր որոնք գլուխնուն կամ իրենց մարմինն ո՛ր եւ է մէկ մասին վրայ լոյս արտադրող գործարաններ

Académie

ունին զորս ի ծնէ վրանին կը կրեն եւ որու միջոցաւ կը կարողանան իրենց բոլորտիքը տեսնել:

Académie Française, Գրականակա Ակադեմիա. — Գրագէտ բարեկամներու պարզ հաւաքոյթ մը սկիզբ տուած է Ֆրանսական Ակադեմիոյ: Կօտօ, Կօմպօ, Շաբլլէն, Տէմարէ, Հապէր, Աբրա Մէրսի, Քօնրար, Սէրիզէյ, Մալվիլ եւ Ժիրի կը խմբուէին Քօնրարի տունը եւ կը վիճաբանէին գրագիտական հարցերով, իրենց երկերը կամ ծրագիրները կը կարդային ու խորհուրդ կը հարցունէին: Քանի մը տարի այսպէս շարունակեցին, առանց մտերմական շրջանակէն դուրս ելլելու, երբ Ռիշլիէօ գործին տիղեկանալով, մտածեց թէ գրական անդամակցութեան մը տարրերը կըրնայ կազմել այդ հաւաքոյթը եւ անոր անդամներուն իմաց տընուաւ: այդ օրէն սկսեալ (1634 Մարտ 13) սոյն հաւաքոյթին մէջ կանոնաւոր արձանագրութեանց տուամար մը բանուեցաւ, ուր կ'արձանագրուէին վիճաբանութեան առարկայ եղող բոլոր նիւթերը, եւ տնօրէն մը, կնքապահ մը ու մշտնջենական քարտուղար մը ընտրուեցան: որոնք եղան Սէրիզէյ, Տէմարէ եւ Քօնրար: Յաջորդ տարին Յունուարի մէջ Լուի ԺԳ. վաւերացուց այդ ժողովը: Ռիշլիէօի նպատակը Ակադեմիոյ միջոցաւ Ֆրանսերէն լեզուն կազմակերպելն էր, ուստի պաշտօն յանձնեց անոր բառարան մը, ճարտասանութեան գիրք մը, քերթողարան մը եւ քերականութիւն մը պատրաստել: ասոնցմէ բառարանին միայն ձեռնարկուեցաւ, իսկ միւս գործերը իբր ծրագիր մնացին: — Ակադեմիոյ կանոնագիրը պատրաստուեցաւ ընդհանուրին աջակցութեամբ եւ Ռիշլիէօի հաւանութեան ենթարկուեցաւ: Այդ օրէնքները քիչ թէ շատ փոխուած են ժամանակին հետ: Այսօր կաճառին տնօրէնն ու կնքապահը կ'ընտրուին ամէն երեք ամիսը անգամ մը պարզ քուէարկութեամբ մը՝ ձայնի մեծամասնութեամբ: միայն մշտնջենական քարտուղարը ցմահ կ'ընտրուի: Արդի քարտուղարը 6000 Ֆրանք թոշակ մը եւ կաճառի շէնքին մէջ բնակարան մը ունի, պարզ ակադեմականները 1500 Ֆրանք կ'ստանան: — Ակադեմիոյ անդամակցելու համար ընտրելին անձամբ կը ներկայանայ եւ բոլոր Ակադեմականներու հարկեցուցիչ այցելութենէ մը ետքը ընտրութիւնը կը կատարուի բացարձակ մեծամասնութեամբ: երբ երեք յաջորդական քուէարկութենէ ետք արդիւնք մը չստացուի՝ ընտրութիւնը կը յետաձգուի: — Ակադեմիան երեք անգամ միայն ի գործ դրած է իր անդամներէն մին մերժելու իրաւունքը: Օժէ տը Մօլէօն տը Կրանիէ կղերականը հրաժարեցուցած է՝ որովհետեւ հաստատուած էր թէ բարեկամէ մը դրամ պահ առնելով վերջէն մերժած էր վերադարձնել: նոյնպէս Ֆիւրբթիէր՝ որ բառարանի համար Ակադեմիոյ պատրաստած նիւթերը առնելով իր անուամբ բառարան մը շինած էր, եւ վերջապէս Սէն Բիէր արքան որ եկեղեցականի անվայել ու անպատշաճ լեզու մը գործածած էր: Ակադեմիոյ առաջին գործն եղաւ պատճառաբանեալ կարծիք մը յայտնել Քորնէլի Սիթ թատերերգութեան վերայ: Ֆրանսայի առաջին գրողատականներէն շաւաբոյնն է այս

Académie

գործը՝ Ֆրանսական Ակադեմիոյ կարծիք Սիսի վրայ (1637) անունով որու մէջ սակայն Բօրնէյլ արդարացի կերպով չէ որ քննադատուած է։ Ակադեմիոյ երկրորդ զբաղումն եղաւ Ֆրանսերէն Լեզուի Բառարանը, որու պատրաստութեան համար ցոյց տրուած դանդաղութիւնը ծաղրանքի առարկայ եղած է. առաջին տպագրութիւնը եղաւ 1694ին։ —

Académie des beaux-arts, Գեղարուեստից Ակադեմիա. — Կազմուած է 1795ին եւ մինչեւ հիմա երեք անգամ վերակազմութիւններ ստացած է։ Կը բաղկանայ 40 գործունեայ անդամներէ՝ նըկարիչ, քանդակագործ, ճարտարագէտ, փորագրիչ, երաժիշտ, և 40 թղթակից անդամներէ։ Այս Ակադեմիան ընտրելիներ կը ներկայացնէ Գեղարուեստից վարժարանին, Վիլլա Մէտիչիի տնօրէնութեան, եւ Ֆրանսական Գոլէճի գեղեցկագիտութեան աթոռին։ Հռոմի Մրցանակին համար պարգեւներ կ'որոշէ։ Վերջապէս 1858էն ի վեր գեղարուեստից բառարանի մը ձեռնարկած է, որու հինգ հատորները միայն լոյս տեսած են։

Académie des inscriptions et belles-lettres. — Արձանագրութեանց եւ գեղեցիկ դպրութ. Ակադեմիա — Հաստատուած է 1663ին Գոլպէրի ձեռքով Պզտիկ Ակադեմիա անունին տակ։ Կը բաղկանար 4 անդամներէ՝ որոնք Ֆրանսական Ակադեմիայէն կ'ընտրուէին։ Առաջին անդամներն եղան Շաբլէն, Շարլանթիէ, Աբբա տը Պուրսէյլ եւ Աբբա Քասսանը։ Ասոնք կը հաւաքուէին Լուվրի պալատին մէջ եւ պաշտօն ունէին Լուի ԺԴ. ի կանգնած յիշատակարաններուն եւ ի պատիւ իրեն շինուած միտալներուն արձանագրութիւնները գրել։ Սակայն, կամաց կամաց չբաւականանալով իր այս պաշտօնէն ուրիշ բաներով ալ զբաղեցաւ, երբ 1701ին Լուի ԺԴ. ի արտօնութեամբ նոր կազմակերպութիւն մը ստացաւ, անդամներուն թիւը 40ի բարձրացաւ։ Ասոնք պիտի զբաղէին Ֆրանսական պատմութեամբ, միտալներ պիտի պատրաստէին գլխաւոր անդքերուն վրայ և գտնուած բոլոր միտալներու, յիշատակարաններու, արձանագրութիւններու մեկնութիւնը պիտի տային։ Այսպէսով Ակադեմիոյ զբաղումը կ'ընդարձակուէր պատմութեան, հնախօսութեան, լեզուագիտութեան եւայլն ստիմաններուն մէջ։

Académie des sciences, Գիտական Կաճառ. — Գոլպէրի ջանքերով հաստատուած է 1666ին։ Այսօր կը բաղկանայ 66 անդամներէ որոնք 11 բաժանումներու ղատուած են։ 1. Երկրաչափութիւն. 2. Մեքենագիտութիւն. 3. Աստղաբաշխութիւն. 4. Աշխարհագրութիւն, 5. Ընդհանուր Բնագիտութիւն. 6. Բնալուծութիւն. 7. Հանքաբանութիւն. 8. Բուսաբանութիւն. 9. Գիւղատնտեսութիւն. 10. Կենդանաբանութիւն եւ Մարդակազմութիւն. 11. Բժշկութիւն եւ վիրաբուժութիւն։ Իւրաքանչիւր բաժանում վեց անդամէ կը բաղկանայ. կան նաեւ երկու մշտնջենական քարտուղար եւ պատուակալ ու թղթակից անդամներ։

Académie de sciences morales et politiques, Բարոյական ու

Acaliphes



Քաղաքական Գիտութեանց Ակադեմիա, — Հաստատուած է 1795ին. կը բաղկանայ 40 անդամներէ վեց ճիւղերու բաժնուած. Փիլիսոփայութիւն, Բարոյագիտութիւն, Օրէնսգիտութիւն, Քաղաքական տնտեսագիտութիւն, Ընդհանուր Պատմութիւն ու Փիլիսոփայութիւն:

(Ֆրանսական Ակադեմիաներու վրայ աւելի ընդարձակ տեղեկութիւններու համար դիմել Institut Բառին):

Académie (ou Société) Royale de Londres, Լոնսոնի Արքայական Ակադեմիա. — Պաքօնի աշակերտները հաւաքուելով Օքսֆորտի մէջ սոյն ընկերութեան հիմը դրին: Շարլ Բ. 1662ին հրամանագրով մը անոր կազմութիւնը արտօնեց: Անգլիացի գիտական հռչակաւոր անձնաւորութիւններ անդամակցած են այս կաճառին:

Académie des sciences de Berlin, Պ. Ուլիցի Գիտական Կաճառ. — Լիպնիցի թելագրութեան տակ Ֆրեդերիք Ա. 1700ին հիմնեց զայն: Սկիզբները այնքան մեծ փայլ մի չունեցաւ: Իր նախագահները շատ անգամ օտարներ էին. ինչպէս Մօբէրթուի Ֆրանսացին, Սակայն Գիյեօմ Ա. ի իշխանութեան ժամանակ քիչ շատ կարեւորութիւն ստացաւ. այսօր պատմական ու բանասիրական ամենէն մեծ Ակադեմիան կրնայ համարուիլ:

Académie des sciences de S. Pétersbourg, Ս. Քեթրսպուրկի Գիտական Ակադեմիա. — Մեծն Պետրոս հիմնած է զայն. առաջին ժողովը տեղի ունեցած է 1725ին: Այսօր գրեթէ համանման բաժանումներ ունի ինչպէս Ֆրանսական Ակադեմիան: Շատ մը գիտական արչաւարումներ պատրաստած է եւ հրատարակած է անթիւ հատորներ ռուսերէն, գերմաներէն ու ֆրանսերէն լեզուներով:



Acalephes, Ծովային եղին. — Ասոնք ծովամայրերու տեսակ մըն են. որոնք ամենախոշոր մեծութիւն մը կ'ստանան: Կան որ 2½ մէթր տրամագիծ ունին և իրենց թելիկները 30 մէթրէն պակաս չեն: — Առնենք այս կենդանիներէն մին եւ քննենք անոր

Ազն. Տիկին Փ. Հազարապետեանի Հանրագիտակի ընթերցողներուն նուիրած Բարոյական եւ գործնական դաստիարակութիւնը աղջկանց վարժարաններու մէջ գործէն ետք, որ այնքան գնահատուեցաւ ձեռնհաս Ուսուցիչներու կողմէ, մեր կարող աշխատակիցներէ մին, որ չուզէր բուն անունը յայտնել, մեզ դրկած է Բարոյական խրատներ՝ Հանրագիտակի ընթերցողներուն համար աշխատութիւնը, որ գրեթէ նոյն ծրագրով պատրաստած է, եւ վստահ ենք թէ նախորդին պէս գնահատութեան արժանանայ։ Արդէն Տիկին Փ. Հազարապետեանի աշխատութիւնը զատ հասորի մը մէջ ամփոփած ենք եւ մօտօրէն տպագրութեան պիտի ձեռնարկենք, զարդարելով գեղեցիկ պատկերներով։ Կը յուսանք թէ նոր սկսած ԽՍՀՆԵՐՆԵՐՆ ալ աւարտելէ ետք անոնք ալ զատ հասոր մը կազմել կարողանանք՝ այսպէս երկսեռ ուսանողներու բարոյագիտութեան սիրուն մասեմադարան մը ձեւացնել։

Բարոյական խրատներ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԻ ՓՈՔՐԻԿ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆԸ

1. — Երբ որ մարդ ըլլամ.

« Երբ որ մարդ ըլլամ » կ'ըսէ Գառնիկ, Հանրագիտակի ընթերցողներէն ուշիմ տղայ մը. « Հարուստ մէկը պիտի ըլլամ, իմ իսկ ստակովս աղբիւրներ, եկեղեցիներ եւ մարդասիրական հաստատութիւններ պիտի շինեմ, դպրոցներ պիտի հաստատեմ եւ, բառին բուն նշանակութիւնով, երեւելի մարդ մը պիտի ըլլամ »

Շատ լաւ, Գառնիկ քու այդ անմեղ փառասիրութիւնդ գովելի է, եւ ես ըսելիք մը չունիմ ատոր դէմ։ Աղբիւրներ, եկեղեցիներ եւայլն շինէ, դպրոցներ հաստատէ, Երբ որ կատարեալ մարդ ըլլաս, մեծ երեւելի եղիր, երբ որ մեծնաս, Բայց մեծ եղիր նաեւ երբ փոքր տղայ ես, Հիմա շինէ եւ մի՛ սպասել որ կատարեալ մարդ ըլլաս. կրնայ ըլլալ որ շատ ուշ մնացած ըլլաս այն ատեն։

Գառնիկ՝ ապրութեամբ երեսմէկը նայի. « Ի՞նչ, աշխարհի վերայ մենք ալ կարեւորութիւն ունինք. տղայ մը կրնայ կամուրջներ շինել, » կը հարցնէ ան. Ո՛չ, բայց եթէ ոչ կամուրջը՝ գէթ անոր խաբիսները կրնայ դնել, Կրնայ նկարագրի մը շինել, եւ մեծ կամուրջ շինողի մը նկարագրին վրայ է որ կը հիմնուի զօրաւոր

եւ տոկուն կամարջ մը: Մեծութիւնը սկիզբ մը պէտք է ունենայ, եւ ո՞ր լաւագոյն սկիզբ մը կրնայ կազմուիլ՝ եթէ ոչ տղու մը անձին մէջ:

Տղոցմէ շատեր ինքզինքնին աշխարհի վրայ անպէտ եւ անօգուտ արարածներ կը նկատեն, իբր թէ ո եւ է բան մը ընելու անկարող ըլլային: Այլոց օգտակար ըլլալ, մեծ ծառայութիւններ մատուցանել եւ ասոնց նման գործերն մեծ մարդերու կը վերագրեն: Բայց, սիրելի՛ պզտիկներ, աս գաղափարը բոլորովին վանեցէք ձեզմէ: Դուք չէք կրնար համբաւ ու պատիւ ստանալ եզական եւ մի եւ նոյն ատեն անցուկ շրջանակի մը մէջ — երբ մարդ ըլլաք: — Ձեր կեանքը սանդուխ մըն է որուն միջոցաւ դուք կը բարձրանաք ճշմարիտ մարդկութեան գագաթնակէտին: Սանդուխն ի վեր շատ կամաց, աստիճան առ աստիճան մագլցելու է եւ դուք ձեր տղայ հասակէն սկսելու էք մագլցելու: « Կուզեմ ընել » եւ « Ես կրնամ » խօսքերն են սանդուխին առաջին երկու աստիճանները: Զանազէք սանդուխին աս երկու աստիճաններուն ոտք դնել եւ ահա, ձեզ բարձրացնող, ձեզ մեծ եւ պատուաւոր մարդեր ընող, երրորդ, չորրորդ ելն. աստիճանները պատրաստ պիտի ըլլան ձեր առջին:

×

Ան որ միայն իրեն համար կ'ապրի, անմարտողութեան տառապանքին ենթակայ է:

— Յուսի սովորութիւնները առնելու համար աւելի քիչ խնամքի կը կարօտին՝ քան ընտանիքի սովորութիւնները:

— Տարիներս հաշտութիւն չէ՛ այլ մեր գործերն են որ կը ցուցնեն թէ մենք որչափ երկար կ'ապրինք:

— Ապագայի համար լաւագոյն պատրաստութիւնը՝ լաւ դիտումն է ներկան է:


— Եթէ գործի ճամբան քեզմէ ցած է, մ'աշխատիր դէ՛պ ի անոր ծռիլ՝ դայն կատարելու համար, այլ ջանայ քու գաղափարականիդ բարձրացնել անոր իսկութիւնը: Պարտականութիւններդ գլխուդ հետ վեր բռնէ միշտ:

Չ. — Հնազանդութիւն

Գլխաւոր յատկութիւններէն մին՝ զոր կը սիրենք տեսնել տղու մը քով, հնազանդութիւնն է: Հնազանդութիւն սովորիլ, մանաւանդ տղու մը համար, ամենադժուարին եւ գրեթէ անկարելի բան մ'է: Տղաք միշտ իրենց հաճոյքներուն հետեւիլ, ո եւ է ազդեցութենէ հեռու ապրիլ եւ ուզածնին անկախօրէն գործադրել

կ'ուզեն , առանց երբեք հետեւանք խորհելու : Մենք որչա՛փ կ'արգահատինք անհնազանդ տղու մը ապագային վրայ , նոյնչափ ալ հիացումով կը գովենք հնազանդ տղոց այս նախանձելի յատկութիւնը :

Տղայ մը որչափ ալ խելացի չըլլայ , որչափ ալ սրամիտ և աշ-



Աշխատասէր եւ հնազանդ տղաք

խատասէր ըլլայ , եթէ իր շուրջ գտնուող անձերու հանդէպ հընազանդ ոգի մը չի կրեր , իր ունեցած ձիրքն ու տաղանդն զերօի չափ արժէք չեն ունենար ուրիշի մը աչքին : Զանգակի մը կը նմանի ան որ , թէեւ թանկագին եւ հաստատուն մետաղներէ շինուած է , բայց թակ չունենալուն համար չի կրնար ձայն հանելով իր շուրջ գտնուողներուն ծառայութիւն մը մատուցանել : Անհնազանդ տղայ մը երբեք յաջողութիւն չի գտնէր իր կեանքին մէջ : Ո՛չ ոք կր սիրէ զինքը , ոչ ոք կ'ախորժի անկէ :

Սիրելի պզտիկներ , հնազանդ եղիք Աստուծոյ որ մեր ամենուն երկնաւոր Հայրն է . հնազանդ եղիք ձեր խղճին՝ որ Աստուծոյ ձայնն է . հնազանդ եղիք ձեր ծնողաց ու դաստատուներուն և սիրայօժար կատարեցէք անոնց հրամանները :

X

Ամուր բռնէ խրատը ու բնաւ մի՛ թողուր, զանիկա պահէ,
վասն զի քու կեանքդ անիկա է:

— Տղա՛ք, ձեր հօրը խրատը լսեցէք ու մտիկ ըրէք որ իմաւորութիւնը ճանչնաք:

— Իմաստուն տղան իր հայրը կ'ուրախացնէ, բայց անմիտ արդան իր հօրը տրամուլիւն է:

— Սրատպահողը կենաց ճամբուն մէջ է, բայց յանդիմանութիւնը մերժողը կը մոլորի:

— Պատուէ՛քու հայրդ ու մայրդ. ինչպէս որ քու Տէր Աստուածդ. քեզի պատուիր՛ց, որ քու օրերդ երկար ըլլան:

ՄՐՏԱՀԱՆԳԻՍ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐՈՒՆ

2. — ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ՆԻԻԹ ՄԸ

Հետեւեալ գեղեցիկ կտորը, որ էտմօն Ռօսթանի գրիչին արդիւնքն է, կը ներկայացնենք մեր ընթերցողներուն, հրաւրելով զանոնք թարգմանել զայն՝ արձակ կամ ոտանաւոր՝ եւ մեզի զրկել: Լաւագոյն գրողին պիտի նուիրենք ժիւլ Վէրնի մէկ սիրուն հատոր՝ Ժ. Դաբլու Նեանաւոր ձամբորդութիւնները՝ ճոխ պատկերներով զարդարուած: Բնականաբար իրկուած գրութիւններուն մէջ ի նկատ պիտի առնուին բնագրին հասկցուած ըլլալը, ոճի ազնուութիւնը, և (եթէ ոտանաւոր գրուած է) տաղաչափութեան օրէնքներու պահպանումը:

LA BROUETTE

Un jour, ayant battu longuement la campagne,
Le Seigneur et le saint, — on était en hiver, —
Firent halte en un bois dont le feuillage vert
N'était plus, sur le sol, que de l'humus rougeâtre.
Saint Pierre eût bien voulu s'asseoir au coin d'unâtre
Et chauffer ses vieux doigts; mais la seule maison
Qui levât son chapeau de chaume à l'horizon
Ne penchait pas au vent la plume de fumée

Qui fait rêver bon gîte et soupe parfumée.
 Donc, ce bois valait mieux, d'autant que le soleil
 Y donnait, un soleil timidement vermeil,
 Un soleil pas bien chaud, c'est vrai, mais tout de même
 Point trop à dédaigner en ce matin si blême,
 Et Pierre, tout fourbu d'aller par les chemins,
 S'étant assis, tendait vers ce soleil ses mains,
 Et les dégourdissait dans sa lumière rose,
 Cependant que Jésus rêvait à quelque chose,
 Debout, et ne sentant ni fatigue, ni froid.
 Pierre cria soudain: «Maitre, fils de mon (Dieu)!
 Regardez, regardez par ici, cette femme!
 N'est-elle pas stupide et folle? Sur mon âme.
 Elle veut ramasser du soleil. Voyez-la!»

Jésus leva les yeux. Une vieille était là,
 De ces vieilles des champs au dur profil de chouette,
 Et cette vieille, avec une énorme brouette,
 Se tenait au milieu du sentier, à l'endroit
 Qu'éclairait un rayon de soleil, tombant droit,
 Et, sitôt qu'il venait dorer son véhicule,
 Cette femme tentait la chose ridicule
 D'emporter le rayon, et poussait aux brancards
 Bien vite. Mais toujours, au moindre des écarts
 Qu'elle faisait du point frappé par la lumière,
 Le soleil s'échappait de la brouette. Et Pierre
 Se divertissait fort à regarder ce jeu:
 La capture, d'abord, du beau rayon de feu
 Entre les ais boueux et gris qu'il illumine,
 Puis sa fuite rapide, et la piteuse mine
 De la vieille pauvre, interdite un moment,
 Mais qui recommençait bientôt, patiemment,
 Sans comprendre pourquoi, dès qu'elle entraît dans l'ombre,
 Elle ne poussait plus qu'une brouette sombre!

«Est-elle simple! Dieu! Voyez ce qu'elle fait!...
 Bon! Elle recommence!»

Et Pierre s'esclaffait.

Mais voici que Jésus, dont l'intérêt s'éveille,
 S'approche et, doucement, interroge la vieille:
 «Femme, que fais-tu là? N'as-tu plus ta raison?»

Il règne un froid terrible en cette âpre saison,
Et je ne comprends pas, ô femme, que tu veuilles.
Au lieu de ramasser du bois sec et des feuilles,
Ramasser ce rayon à peine réchauffat ! »

« C'est pour le rapporter à mon petit enfant,
Dit la femme en levant le front. Je suis l'aïeule
D'un pauvre enfant malade à qui je reste seule,
Car cet hiver, le père et la mère sont morts.
Pour travailler, mes bras ne sont plus assez forts,
Je ne peux que glaner, et ce travail-là chôme.
Et l'enfant va mourir sous notre triste chaume,
Sans même avoir connu ces douceurs, ces bonbons,
Qui font sourire encor les petits moribonds.
Ne pouvoir pas gâter alors qu'on est grand'mère,
C'est dur ! Que lui donner ? Je ne savais que faire !
Mais voici qu'il me dit, ce matin au réveil :
« Je serais bien content si j'avais du soleil ! »
(Car le soleil jamais n'entre dans ma chaumière,
Et mon petit garçon est privé de lumière.)
Alors, voyant qu'ici ce soleil a relui,
Je viens en ramasser un bon morceau pour lui. »
Et la vieille reprit, avec foi, sa besogne.

Quand il se sent ému, saint Pierre se renfrogne.
Il dit : « Elle est stupide ! Elle ne voit donc pas
Que son soleil s'en va dès qu'elle fait un pas !
Cette vieille cervelle est dure comme pierre,
Et ne comprend plus rien ! »


Mais Jésus dit à Pierre,
Pensif, ayant rêvé sur cette femme un peu :
« On ne sait pas ce que l'amour des simples peut ! »
Et n'ayant pas compris toute cette parole,
Saint Pierre répétait : « Mais cette femme est folle !
Elle est folle, Seigneur !... »

Soudain, il s'arrêta,
Presque aussi confondu quand le coq chanta,
Car la vieille marchait, maintenant, sous les branches,
Et les rayons restaient entre les quatre planches,
Et les rayons, dans l'ombre, étincelaient encor,
Et, paraissant pousser devant elle un tas d'or.
Sans s'étonner, la vieille, impassible et muette,
Emportant le soleil dans son humble brouette.

EDMOND ROSTAND
De l'Académie Française

3. — ԳՐԱՀԱՇՈՒԱԿԱՆ ԽՆԴԻՐ


Պարտէզի մը մէջ կանոնաւոր խորանարդաձեւ 3 աւազան կայ որոնք իրարու կցուած են ամէն կողմերով 10ական սանթիմէթր



Հաստութեամբ պատերով (իրարու կըցուած պատերն ալ՝ ո՛չ թէ $10 + 10 = 20$, այլ միայն 10 սանթիմէթր ըլլալով), Անոնց երեքին մէկէն՝ պարտէզին մէջ բռնած ծաւալին (տարածութիւն = dimension) 27,568 խոր. մէթր ըլլալով՝ գտնել այս 3 աւազաններուն պարունակութիւնը կամ տարողութիւնը (capacité):

(Լուծումը կը պահանջուի 3 աստիճանի Հաւասարութեամբ):

Գ. ԷՕԼՄԷՁԵԱՆ



Ա. Երկու ձիավարիկ պատրաստ կեցած են սոյն ձիերուն վրայ հեծնելու, բայց ձիերը մեռած վիճակի մը մէջ կը գտնուին. ալդ այս երկու ձիերը ինչ դիւրեքի մէջ դընելու է որ ձիավարիկները վրանին նստած աստեղծին քառասունհակ վազեն:

ԿԱՐԵՒՈՐ ԶԵԿՈՅՑ ՄԸ

Հանրագիտակ երկու տարի է ի վեր կանոնաւորաբար հրատարակուելով, կարծենք թէ, բաւական վստահութիւն ներշնչեց իր յարատեւութեան մասին, սակայն զարմանալի է տեսնել որ երբ մենք առանց վերապահութեան վստահութիւն կ'ընենք առաջին անգամ ներկայացնող բաժանորդներուն և քիչ ետք բաժնեգիրք գանձելու խոստումը ընդունելով թերթ կը ղրկենք, տարեշրջանը աւարտելէն տակաւին երկու ամիս ետքն ալ չենք ստանար կարգացում թերթերու դրամը: Հիմա որ ընթերցող հասարակութեան ճանջցուցինք մեր ձեռնարկին լրջութիւնն ու յարատեւութիւնը, որոշած ենք ապառիկի դրութիւնը վերցնել, ուստի կը խնդրենք որ առանձին նամակով մը անձնապէս թերթ ուղղոյները բաժնեգիրք միասին ղրկեն, նոյնպէս մինչեւ հիմակ ուղղակի մեզ բաժանորդագրուողները դրամը մեզ հասցնեն առանց յապաղումի: Իսկ հոն ուր գործակալ ունինք, արդէն անոնք սկսած են բաժնեգիրները գանձել եւ չենք յուսար որ ո եւ է մերժում մի հանդիպին քանի որ սրոյ պայմանաժամէ մը ետքը ապառիկ թերթերը դադրեցնելու մտադրութիւն ունինք:

Տպագրիչ եւ Հրատարակիչ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ

ՊՈԼԻՍ, ՊԱՊԸ ԱԼԻ ԶՍՏԷՍԻ, ԹԻԻ 38. ԻԳՏԱՄ ԼՐԱԳՐԻ ԴԷՄ

Գաւառները գլխաւոր քաղաքներու մէջ ընդհանուր ներկայացուցիչներ ունի տպարանս, որոնց կրնան դիմել տպագրական ամէն տեսակ գործեր ունեցող, եւ կամ ո՛ր եւ է գրքի մը պէտք ունեցողները, եւ փոխարժէքն անոր վճարելով, կ'ընդունին տպագրանքները: Այս միջոցով իրենք կ'ազատին թէ՛ աւելորդ ծախսերէ եւ թէ՛ նամակի եւ այլ կորուստներէ. եւ ինչ որ ամէնէն կարեւորն է, փոքր գումարներու փոխադրութեան համար յառաջ եկած դժուարութիւններէն ու հոգերէն կ'ազատին:

Գաւառներու մէջ Հանրագիտակի Մեծ. Գործակալներու դիմողները կրնան սա տպաւելութիւնն ալ վայելել որ, թէ՛ իրենց յանձնարարութիւնները կէտ առ կէտ կը կատարուին ամենակարճ ժամանակի մէջ եւ թէ միշտ վստահելի անձնաւորութիւն մը կ'ունենան իրենց մօտ պատասխանատու ամէն առթիւ:

ԽՄԲԱԳՐԱԳԵՏ-ԱՐՏՅՆԱՏԵՐ

ՏՊԱԳՐԻԶ-ՀՐԱՏԱՐԱԿԻԶ.

ԱՐՄԲԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապր Ալի ճատոէսի, Թիւ 38

Նոր տարիէն սկսեալ Հանրագիտակ կը հրատարակուի շաբաթական 20 էջէ բաղկացեալ :

Վեցամսեայ ու երեքամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր :

Ա Ր Ե Կ Ա Ն Գ Ի Ն Ն Է

Պոլսոյ համար

30 դրուշ

Գաւառաց »

35 »

Արտասահման

45 »

Հատը

30 փարայ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼՔ

Ամասիա, Հայկազուն էֆ. Խանդամուր
Ասաբազար, Աշոտ էֆ. Պաղ պաղեան
Գօնեա, Տիգրան էֆ. Յ. Տիւլկէրեան
Եւքովիա, Խաչիկ էֆ. Գ. Թաշճեան
Երզնկա, Պարոյր էֆ. Արզուման
Զմիւռնիա, Կարապետ էֆ. Մալէճանեան
Էրզրում, Տիգրան էֆ. Բրուտեան
Էրզաւա, Միսաք էֆ. Ս. Մելգոնեան
Թալաս, Կարապետ էֆ. Գօճաեան
Թեփրեսալ, Ասատուր էֆ. Արսէնեան
Թրիպօլի Գրիգոր էֆ. Հ. Գարագաշեան
Խարբերդ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Կեօսարիա, Երուանդ էֆ. Երկաթեան
Կիւասոն Թովմաս էֆ. Գարագաշեան
Կիւրիկ, Գրիգոր Մ. էֆ. Խանդամուր
Հալեպ, Կ. էֆ. Պօտիկեան
Հիւսէյնիկ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Մալաթիա, Արժ. Տ. Գրիգոր Քաչ. Թաշճեան
Մարաշ, Արժ. Տ. Նէրսէս Քաչ. Շահինեան
Մարզուան Արամ էֆ. Գարակէօյեան
Միացեալ-Նահանգներ, Մ. Մ. Գարակապուրեան և Ընկ.
Նիկովիդիա, Յակոբ էֆ. Տ. Ազարեան
Նիսաւր, Յովհաննէս էֆ. Փանոսեան
Շապին Գարա Ռիսաւր. — Գազիկ էֆ. Օղանեան
Պալատուրդ, Մասիկոն էֆ. Վարժապետեան
Սամսօն, Յովհաննէս էֆ. Նիքսարլեան
Սրվազ, Միհրան էֆ. Իսպիրեան
Տիարաքիք, Լևոն էֆ. Սրապեան
Օրսու, Յովհաննէս էֆ. Հէքիմեան